

ՀՀ ՏԿԵ նախարարության նախարար՝ Գնել Սանոսյանին

Ք. Երևան, Կառավարական տուն 3

«Գալակտիկա» տրանս սերվիս ՍՊԸ-ի տնօրեն՝

Շուշանիկ Մուշեղի Խաչատրյանից

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան փ. 28, բն.99

Պատճենը՝ Մրցութային հանձնաժողովին

Հարգելի՛ պարոն Սանոսյան,

ՀՀ ՏԿԵ նախարարությունը հայտարարել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար: Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ 2021 թվականի նոյեմբերի 2, մինչև 17:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 5, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 9, ժամը 11:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:

Վերոհիշյալ մրցույթին մասնակցել են թվով երկու ընկերություններ՝ «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ և «Ընկերներ» ՍՊ ընկերությունները:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության ՝ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և պայմաններն են՝

1. Հայտ՝ N2 ձևի
2. * Ավտոբուսների գրացման վկայագիր (ժամանակավոր կտրոն):
3. * Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4. * Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրելու նպատակով վերասարքավորված ավտոբուսների համար լիազոր մարմնի կողմից տրամադրված վերասարքավորման մասին թույլտվության մասին որոշում:

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22. 1 կետի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2021 թվականի նոյեմբերի 8-ը ժամը 12:00 փոխանցել սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար՝ ՀՀ 900008000730:

Սույն թվականի նոյեմբերի 02-ին «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ ընկերությունը պահպանելով հայտարարված մրցույթի բոլոր պահանջները փակ փաթեթը ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Դրա շրջանակում ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 22.1-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունը երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցել երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը Կազմակերպության հիմնադրի միջոցով իր հաշվեհամարից՝ որպես իր կազմակերպության գործունեությանը ուղղված կապիտալ ներդրում:

Սրա հետ կապված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից բանավոր կերպով մեզ հայտնել են, որ փոխանցումը կատարվել է վերոհիշյալ իրավանորմի խախտմամբ, այն հաշվառմամբ, որ փոխանցումը կատարվել է Կազմակերպության հիմնադրի անունից իր հաշվահամարով՝ նշելով նաև, որ դրա հիման վրա մեր ներկայացրած հայտը մերժվելու է:

Չնայած այն հանգամանքին, որ ինքնին անհասկանալի է, թե ինչ իրավասությամբ են նախարարությունից այդպիսի բան հայտնել, այն դեպքում, երբ դրա իրավասությունը պատկանում է բացառապես Մրցութային հանձնաժողովին, այնուամենայնիվ, վերոգրյալի առնչությամբ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 22.1-րդ կետը չի սահմանում պահանջ առ այն, որ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին փոխանցումը պարտադիր կերպով պետք է իրականացնի Կազմակերպությունը՝ իր հաշվահամարով, որի պարագայում նման պահանջի ձևակերպումը արդեն իսկ խախտում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված վարչարարության օրինականության սկզբունքը:

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Տվյալ դեպքում, անգամ եթե ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 22.1-րդ կետը կարելի է մեկնաբանել այն համատեքտում, որ փոխանցումը պետք է կատարվի Կազմակերպության հաշվեհամարից, ապա ամեն դեպքում Կազմակերպությունը բովանդակային առումով հիշյալ կետով սահմանված պահանջը կատարել է՝ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցել երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը: Ավելին՝ վճարումը հավաստող փաստաթղթի նպատակ դաշտի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ փոխանցումը կատարված է որպես «Գալակտիկա Տրանս Սերվիս» ՍՊԸ մրցույթի մասնակցության 1 մլրդ. 213 մլն. 525208 դր. գումարի 1.5% վճար, ինչից ակնհայտ է, որ գումարը փոխանցված է ի կատարումն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 22.1-րդ կետի:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 30-րդ կետի համաձայն՝ «Փաթեթները բացվում են մրցույթի մասին հայտարարությամբ նախատեսված օրը և ժամին՝ հանձնաժողովի հատուկ նիստում, որը նշանակվում է փաթեթներն ընդունելու վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը: Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, կարող է կազմակերպությունից պահանջել փաթեթում ներկայացված փաստաթղթի բնօրինակը»:

Նույն հավելվածի 33-րդ կետի համաձայն՝ «Փաթեթներում թերություններ լինելու դեպքում հանձնաժողովը դրանք հայտնաբերելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է կազմակերպություններին վերացնել թերությունները»:

Տվյալ դեպքում, սակայն փաթեթը բացվել է նոյեմբերի 5-ին, Մրցութային հանձնաժողովի կողմից ստուգվել են հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը, այդ

թվում՝ ավտորուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը վճարելը հավաստող փաստաթուղթը, սակայն որևէ թերություն չի մատնանշվել, որի պարագայում մրցույթի հաջորդիվ փուլերում փաստաթղթերի հետ կապված թերության մատնանշումը իրավաչափ չէ, քանի որ մասնակցին զրկում է վերը հիշատակված հավելվածի 34-րդ կետով սահմանված թերությունները վերացնելու իրավունքից:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ Կազմակերպության հաշվեհամարից փոխանցված չլինելու ձևական նկատառումով Կազմակերպության որևէ իրավունքի տրամադրումը մերժելն ապօրինի է և խախտում է ձևական պահանջները չարաշահելու անթույլատրելիության սկզբունքը:

Հարգանքով՝

«Գալակտիկա» տրանս սերվիս ՍՊԸ-ի տնօրեն՝

Շ. Իսախանյան

17 նոյեմբերի 2021թ.